

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 163

**Ընդհանուր շնորհք** – Ընդհանուր շնորհքը կարելի է սահմանել որպէս Սուրբ Հոգու այդ շնորհքը կամ գործունէութիւնը որով Նա ընծայում է բազմաթիւ օրհնութիւններ մարդկանց՝ որը չի ընդգրկում մի փրկանաւորական նշանակութիւն: Աստուծոյ բարի կամքից բխում են բարի արարքներ՝ ուր Աստուած մատակարարում է բարօրութիւն բոլոր մարդկային ցեղի համար (Ղուկաս 6:35-36): Աստուծոյ ընդհանուր շնորհքը երեւան է գալիս անթիւ ձեւերով:

**Բնական օրհնութիւններ** – Աստուծոյ բարութիւնը ցուցադրում է այն իրականութեան մէջ որ նոյնիսկ թէկուզ մարդիկ ծնունդ են հոգեւորապէս մեղաւոր, սակայն նրանք թոյլատրել են շարունակել ապրել մի բնական կեանք մի ժամանակաւոր շրջանի համար: Այս ներկայացնում է Աստուծոյ շնորհքն ու երկայնամտութիւնը չիրականացնելով մահուան դատաւճիռը լիովին եւ անմիջապէս մեղաւորների վրայ, ու նաեւ հայթայթելով նրանց առիթ ապաշխարելու եւ փրկելու (Ծննդոց 2:17, Եսայիա 48:9, Ղուկաս 13:6-9, Հռովմայեցիս 2:4, 6:23ա): Աստուծոյ լիառատ նախատեսութիւնը եւ խնամքը նաեւ երեւան է գալիս աշխարհք եղած սննդի աղբիւրների եւ նիւթերի մեծ առատութեան եւ բազմազանութեան մէջ՝ հարկաւոր կեանքի պահպանութեան համար (Մաղմուս 145:9, 15-16, Մատթէոս 5:45, Գործք Առաքելոց 14:16-17): Այս բոլորը անարժան օրհնութիւններ են, հոսելով Աստուծոյ բարեկամութիւնից:

**Բարիի, ճշմարիտի, եւ գեղեցիկի զգացում** – Ստեղծւած Աստուծոյ պատկերով ընկած մարդը դեռեւս կրում է բարիի, ճշմարիտի եւ գեղեցիկի որոշ զգացումը: Բոլոր մարդ արարածներ ունեն Աստուծոյ առթիւ որոշ գիտութիւն բնութիւնից (Հռովմայեցիս 1:21), եւ ճիշտ ու սխալի ներքին զգացում խղճմտանքից (Հռովմայեցիս 1:32, 2:14-15): Ոչ հաւատացեալներ դեռ կարող են մտածել, տրամաբանել, ուսումնասիրել եւ աճել իրենց գիտելիքներումը: Ոմանք օրհնել են շատ հասկացողութեամբ, ըմբռնելով եւ գնահատելով մեծամեծ ճշմարտութիւններ: Մենք տեսնում ենք այս իրականութիւնը գիտութեան եւ տեխնոլոգիայի մարզերում եղած բնական մարդու առատ տաղանդների եւ կարողութիւնների մէջ, յառաջացնելով գլխաւոր յայտնաբերումներ, հնարումներ, եւ յառաջադիմութիւններ կեանքում՝ օգտակար բոլոր մարդկութեան համար: Նաեւ տեսնում ենք մարդու հմտութիւնը եւ գեղեցկութեան գնահատումը արւեստի, երաժշտութեան, գրականութեան, եւ արւեստագիտութեան մէջ: Սակայն, այս առաւելութիւնների հանդերձ բնական մարդը ճնշում է Աստուծոյ ճշմարտութիւնը, չի պատում Աստուծուն եւ չի վախենում Նրանից, իսկ փոխարէն հնարում է ամեն ձեւի մարդա-կենտրոն կեղծ կրօններ (Գործք Առաքելոց 17:22-23, Հռովմայեցիս 1:18-32):

**Մեղքի զսպում** – Բացի խղճմտանքը, Աստուած նաեւ հաստատել է մարդկային կառավարութիւնը որպէսզի պատժել յանցագործին, պաշտպանել անմեղին, եւ պահպանել պատշաճ կարգ ու կանոն հասարակութեան մէջ (Հռովմայեցիս 13:1-4): Աստուած գործածում է խղճմտանքը եւ մարդկային կառավարութիւնները որպէսզի սանձել մեղաւոր արարքներ եւ ուստի զսպել մեղքը անհատների կեանքերում եւ հասարակութեան մէջ: Այս Աստուծոյ շնորհալի ցանկապատն է տեղադրւած մեղաւորների եւ պետութիւնների շուրջը որպէսզի դրանք չլինեն այնքան չար որ կարող են լինեն: Երբեմն Աստուած պատժում է մարդկանց եւ պետութիւններին մէկ կողմ քաշելով եւ հեռացնելով Իր շնորհաց ցանկապատը, մատնելով նրանց աւելի պղծութեան մէջ (Մաղմուս 81:10-12, Հռովմայեցիս 1:24-28):

**Արտաքին բարի գործեր** – Վերակազմ աստուածաբանութիւնը հաստատում է թէ ընկած մարդկութիւնը կարող է եւ կատարում է բաներ որոնք որոշ իմաստով բարի, ազնիւ եւ օգտակար են՝ ինչպէս սիրել իրենց ընտանիքներին, լինել օրինակ քաղաքացիներ եւ աշխատասէր գործաւորներ, օգնել ուրիշներին, լինել բարեգործական եւ կամաւոր լաւ մարդասիրական պատճառների համար (Ղուկաս 6:32-34, 11:11-13): Պատճառը որ տեսնում ենք այսպէս սէր, հաւատարմութիւն, գեղեցկութիւն եւ բարութիւն մարդկանց մէջ, այդ է որ դրանք բոլորը մարդկանց վրայ եղած Աստուծոյ ընդհանուր շնորհքի արտայայտութիւններն են՝ քանի որ նոյնիսկ անկումից յետոյ մարդ արարածներ կրում ենք Աստուծոյ պատկերը՝ թէեւ խիստ աղաւաղւած: Սակայն հարկ է նշել թէ այսպէս բոլոր արարքները սահմանում են որպէս բնական բարիք կամ որպէս քաղաքացիական առաքինութիւններ՝ արարքներ որոնք կատարում են հորիզոնական գիծի վրայ, բերելով օրհնութիւններ ուրիշ մարդկանց: Բայց այսպէս արարքները հոգեւորապէս կամ բարոյականօրէն բարի արարքներ չեն, քանի որ դրանք չեն բխում Աստուծուն սիրելու, հաճեցնելու եւ փառաւորելու իրական ցանկութիւնից: Սրանք չունեն որեւէ ուղղահայեաց նպատակ, եւ ուստի բարոյականօրէն անարժէք են անընդունելի են Աստուծոյ առջեւ (Ա. Թագաւորաց 16:7, Մարկոս 12:30, Հռովմայեցիս 3:12):

Աստուծոյ ընդհանուր շնորհքը թափած բոլոր մարդկութեան վրայ ցուցադրում է Նրա սէրը, բարութիւնը եւ առատաձեռնութիւնը Իր արարածների հանդէպ. այդ երեւան է բերում Նրա ողորմութիւնը ու երկայնամտութիւնը, յետաձգելով չարագործի վերջնական պատիժը. եւ այդ բացայայտում է Նրա բարկութեան եւ դատապարտութեան արդարութիւնը՝ քանի որ այդ բոլոր բարիքները ստանալուց յետոյ մեղաւոր մարդը շարունակում է իր կռապաշտութեամբ, մերժելով պատշաճ երախտագիտութիւնը եւ երկրպագութիւնը որ նա պարտք է Աստուծուն: Եւ ի վերջոյ Աստուծոյ ընդհանուր շնորհքը արտայայտում է Աստուծոյ փառքը, որովհետեւ այն ամէն ինչը որ բարի, ճշմարիտ եւ գեղեցիկ է այս ընկած աշխարհքում բխում է հենց Ինքը Աստուծուց՝ երեւան բերելով Նրա վեհափառութիւնը, սրբութիւնը, իմաստութիւնը եւ զօրութիւնը: